

կանին հանգուցեալ Գրիգոր Արծըունին «Մշակի» էջերում քարոզում էր. «Մենք անդադար կրկնում ենք, որ քահանաւի, մանաւանդ գիւղական քահանաւի համար աւելի լարմար է միջին ուսումնարանի ուսումը, ... քան թէ Աստւածաբանական բարձր ճեմարանական ուսումը», բարձր ուսումը հեռացնում է մարդուն գիւղական տգետ հասարակութիւնից, մանաւանդ մեզանում որտեղ բոլորս կարծում ենք թէ կոչւած ենք աւելի մեծ դեր իաղաւու քան գիւղական քահանաւի համեստ ասպարէզը, որ տեղ չի կարելի թմբով ածել, չարած գործեր ի լուր աշխարհի հոչակել երիտասարդութեան վարիչ հանդիսանալ, կուսակցական պատքարներ մզել ընտրել ընտրել և փազել: Այս միտքն այսօր, իբրև իրականութեան պատկեր, իբրև նոյն իսկ մի տեսակ բողոք իրականութեան դէմ, արտավալուած ենք տեսնում «Արարատ» էջերում. ահա չորս կողմից կրքեր են լուզում, տրտունջ, զայրութ, նոյն իսկ հետնութիւն սողուում են Արքէն Երէցի հասցէին, որ իւր մի փոքրիկ նկատողութեամբ ցոյց տւեց թէ որքան ընդունակ է կեանքի խորը դիտելու, ճշմարիտ իրականութիւնն ըմբռնելու:

Ամփոփենք մեր խօսքերը:

Գիւղական քահանաների ճեռնաղբութեան ինդիրն անորոշ պահանջներով, սովորական բացազանչութիւններով, միչև իսկ Սինօդի շրջաբերականներով բարւութել չի կարող Փոխանակ ընդհանրապէս ուսեալ քահանաներ պահանջելու, մամուլը և հասարակութիւնը պէտք է պահանջեն և նպաստեն, որ հոգեսոր իշխանութիւնը հիմնէ առանձին ծրագրով դպրոցներ, որտեղ պատրաստում են գիւղական հասարակութեանն օգտակար լինելու ընդունակ քահանապացուներ: Ազգախիժ դպրոցների ամենապարմար տեղը վաճաքերն են: Իսկ մինչեւ ազգախիժ դպրոցների բարեկարգելու հոգեսոր իշխանութիւնն ստիպւած կը լինի ճեռնաղբել անպիսներին, որոնք ինքնակրթութեամբ ճեռք բերած կը լինին քահանանլապատշաճ հմտութիւն, վերջիններիս մէջ էլ խիստ ընտրութիւն անելով:

Մ. Պ. Զ.

### ՀԱՅՈՑ ՍԵՄԻՆԱՐԻԱՆԵՐ ԵՒ ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ԽՆԴԻՐԻ<sup>1)</sup>

Դեռ այս դարւաւ երեսնական թւականներին հայոց եկեղեցու համար կրթած պաշտօնեաներ պատրաստելու մեծ պահանջ է զգացւել. այդ նպատակով Պոլոժինիան իրաւունք էր տեղ մեր հոգեսոր վարչութեանը իւրաքանչիւր թեմում մի մի սեմինարիա բանալ: Գլխաւորապէս ալդ նպատակով հիմնւած լինելով մեր սեմինարիաները, անու ամենաճնիւ, կարծես հիմա էլ raison d'etre չունեն, անհրաժեշտութիւն չեն, երկնքի և երկրի մէջտեղ են կախւած...

<sup>1)</sup> «Մշակ», 1894, № 48.

Ամեն մի ուսումնարան գրաւում է ուսանելու համար ցանկացողների որոշ թիւ, նաևած թէ ապագայում որ ասպարիզի համար պարտաւոր եցուցիչ է ադր ուսումնարանից աւարտած լինելը. ամեն մի քաղաքակրթւած երկրում իբրև սկզբունք ընդունւած է, որ բժիշկը, քննիչը, ուսուցիչը, ինժեները պէտք է ոչ միայն որոշ միջին, այլ և բարձր կըրթութիւն ստացած լինեն. և քանի որ ազգապէս այդ ասպարէզները խափանւած են, ուստի գիմնազիական կամ թեալական ցհնզը պայման է սու զառի համարնելու է, որ ի թ և անհրաժեշտութիւն ադր ուսումնարանները տարուց տարի բազմանում են, շրջանաւարտները շատանում, իբրանք ուսումնարանները բարեկարգուում. Նոցնը և հոգեոր ասպարէզ ընտրողների համար շեռու չգնանք օրինակների ետևից և վերցնենք Ռուսաստանը, ուր քահանա աչից պահանջնում է ու մինարելի ական ցենզ, իսկ հոգեոր իերարխիակի պաշտօնեաններից՝ լաջորդից, վիճակաւորից՝ նաև հոգեոր ճեմարանից աւարտման վիճական. Ռուսաց սեմինարիանները հոգեոր ասպարէզ ընտրողների համար իբրև պարտաւոր եւ ցուցիչ կրթական հիմնարկութիւններ մի անհրաժեշտութիւն են, ուստի թւով այժմ 55 են, իսկ շրջանաւարտների թիւը իւրաքանչիւրից լինում է տարին 30—87 հոգի. Զնայած որ ուսու «մուժիկը» աւելի գրագէտ և կրթւած չէ հայ գիւղացուց, անու ամենայնիւ ուսուաց սեմինարիաններից աւարտած երիտասարդները չեն «ասորչամ գիւղերում քահանա լինելուց», ուստի և հարի չէ լինում «թերումներով» գիւղերը լցնելու հարցը պաշտպաննելու.

Իսկ մեզ մօտ... որ քահանապիցն է պահանջում ոչ միայն սեմինարիական, այլ որ և է ցենզ և ներկայ պահմաններում ով քահանա ձեռնադրելու ավտման դիւրին ճանապարհը թողած՝ գլուխը կը ցաւացնի քահանապահմալու համար ոչինչ նշանակութիւն չունեցող սեմինարիական ցենզ ձեռք բերելու. Վ՞նչու էք զարմանում, որ մեր սեմինարիաներից շրջանաւարտների թիւը 5—10 հոգուց չէ անցնում.—Վ՞նչ է սպասում մեր սեմինարիան աւարտողին. ծխական դպրոցում ուսուցչութիւն և արտասահման՝ ուսումնի շարունակելու, իսկ քահանա այցելի համար սեմինարիական ցենզը մի շուալութիւն է, քանի որ շատ և շատ դիւրին ու կարծ ճանապարհ կատ... հարցրէք մեր թեմակալներից... Հիմա ծխական դպրոցի ուսուցիչ լինելու համար սեմինարիան աւարտեն էլ բաւական չէ, իսկ արտասահման գնալ հազարից մէկին կաջողվի. Գուցէ սեմինարիա կը մըտնեն՝ գիտութիւն ձեռք բերելու, հէնց գիտութեան համար, բայց քանիսը, Վ՞նչու ուսուաց սեմինարիաներում աւարտողների թիւը 87 և աւելի է լինում. ինչու ուսու գիւղերում կրթւած քահանաներ կան, մի քիչ մտածեցէք և ինքներդ կը հասկանաք, թէ ինչու մեզ մօտ այլ է իւրականութիւնը.

Միւս կողմից, ինչ է սպասում քահանակին. 1) տնտեսական անապահով ստորացնող զրութիւն, պէտք է իւրաքանչյւր անգամ ծխականին ձեռք մեկնել՝ ընտանիքով սովոր չը մեռնելու համար. 2) պէտք է անգամ համար էլեմենտներ լինել իշխանաւորից, որի կամացականութեան դէմ օրինական արգելքներ չկան. Ուրեմն քահանակին մի սարսափելի տնտեսական-բարուկան միջնավար է սպասում, իսկ ազգափախ միջնավարը միան սոոր զարգացման և պահանջների մարդկանց կարող է գոհացնել...

Մի 15—20 տարի առաջ մեր ծխական դպրոցների ուսուցիչների թէ ցենզը և թէ զրութիւնը աւելի լաւ չեր, քան հիմա քահանաներինը, բայց տեսէք սիստեմատիկաբար առաջ տարած ուսումնական ցենզի պահանջը ինչ փոփոխութիւններ առաջ բերեց, թէր են թերուս տիրացուները, խալիփաները և աղահոգաբարձուների այս կամ ան տգէտ ազգականները ուսուցչութեան պաշտօնվ, դրանց մեծ մասը չքացել են, իսկ միւսները անհետանալու վրայ են, Եւ որովհետեւ արդ սիստեմատիկական պահանջի շնորհով աջմ ուսուցչական դասը կազմւած է համեմատաբար աւելի զարգացած անհատականութիւն ունեցող և կրթւած անձերից, ուստի և ուսուցչի լարգը օրից օր բարձրանում է ժողովրդի աչքում, բարձրանում է տնտեսական ապահովութիւնը և ծագում են նորանոր խնդիրներ՝ աւելի բարելաւելու նրանց վիճակը, թէ տնտեսապէս և թէ բարուավակէս. Միջնավար և անձինք, զրանք իրար հետ սերտ կապւած բաներ են. լաւացրէք միջնավարը — չոկողութեան օրէնքով լաւերը կը մտնեն նրա մէջ, կամ խիստ ընտրութիւն կատարեցէք, և կը լաւանալ միջնավարը, որովհետեւ լաւ պատրաստւած անձինք իրանք կառաջ աջանեն և պաէմանն երի նպատակ աշարմար փոփոխութիւն, ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ կուսակրօն հոգերուականութեան համար, որից ընտրում են հոգերը վարչական պաշտօնեաներ, պակաս անհրաժեշտ չէ կրթական բարուական ցենզը, որովհետեւ ոչինչ անպէս վնասակար չէ, որչափ իշխանութիւնը տգէտ և անբարուական մարդու ձեռքում. Բարեփոխեցէք քահանակական ակմեան տնտեսական-բարուական միջնավարը և միւս կողմից խիստ ընտրութիւն արէք և սեմինարիաները կը ստանան րայսոն ձ'եթե, նրանց շրջանաւարտների թիւը մի քանի տասնեակների կը հասնի և ամեն մի գիւղ կունենալ «ուսեալ քահանայ», Ի՞նչու գիւղական ծխական ուսումնարանը ունի ցենզով ուսուցիչ, իսկ նոյն գիւղը քահանայ չունի. Խնջուքադները լի են կրթւած ուսուցիչներով, իսկ քահանաներով ոչ. Ուրեմն բաւական չէ ասել թէ՝ «ուսեալ երիտասարդը գիւղ չէ գնում քահանակի պաշտօնով», այլ պէտք է իմանալ բուն պատճառը, որ այլ է, քան մեկնում են.

Մօտ 60 տարի բացւած սեմինարիաների գոխութեան անհրաժեշտու-

թիւնը չըմբռնած, նրանց տնտեսական—ուսումնական վիճակը չբարեկարգած՝ մտածել վանքերում ընծալարաններ բանալու մասին, —նշանակում է մի սկսած գործ կիսատ պրատ թողնել և մի ուրիշին ձեռնարկել Եւ միթէ վանքերը աւելի լարմարութիւններ ունեն միջնակարգ ուսումնարաններ պահելու, քան քաղաքները, ուր ունենք սեմինարիաներ, Եթէ ընծալարանների նպատակը պէտք է լինի՝ տիրացումներին միան եկեղեցական ծիսակատարութեան մէջ վարժեցնելը, այն ժամանակ իզուր է սպասել, որ նրանք ժողովրդի համար «ճրագներ» դառնան, «որոնք կը փառատեն խաւարը»։ Զենք կարծում, որ իրականութիւնը ապացուցի, որ հարիւրաւոր գիւղեր անքահնանաչ են. ընդհակառակն կարելի է ասել որ հարիւրաւոր եկեղեցիներ թւով աւելի քահանաներ ունեն, քան թէ հարկաւոր է, և եթէ մի քանի տեղեր ճիշդ որ քահանաներ չկան՝ այդ բացառական դրութիւնը իրբ ընդհանուր օրէնք առաջ բերելուց շատ հեռու է։

Մեզ ասում են, «միջին դարերում ամբողջ գլուխութիւնը վանքերումն էր կենտրոնացած», ինչ անենք. միթէ հիմա էլ նունն է. կամ տասնեակ դարերում մարդկութեան պատմական-հասարակական կեանքի պամանների փոփոխութիւնները ձեզ համար գոյութիւն չունեն, կենտրոնացրէք ձեր ուշագրաւթիւնը ունեցած սեմինարիաների վրայ բացէք դեռ գոյութիւնը չունեցողները, միան թղթի վրայ մի ընդունէք նրանց անհրաժշտութիւնը ալ և կեանքի մէջ, և հաւատացէք, որ կունենաք շատ և շատ ուսեալ քահանաներ խակ ով կարող է հակառակ լինել, որ բարեկարգւեն մեր վանքերը, ով հակառակ կը լինի, որ կարգ ու հաշւէտւութիւն մտնի ոչ միան մեր վանքերի, ալ և բոլոր դործերում. ով կարող է հակառակ լինել, որ այն վանքերում, ուր լարմարութիւն կա՝ ծխական գործոցներ բացւեն հարեան գիւղերի համար։

Սեմինարիաներ ունենք քահանաներ պատրաստելու, քահանաներ չունենք սեմինարիաներից աւարտող,—ահա իրողութիւնը, որի պատճառը, լուսով ենք, մասամբ պարզեցինք. Ինչու ոչ միան գիւղերում, ալ և քաղաքներում ուսեալ քահանաներ չունենք, նոյնպէս մասամբ պարզւեց։

Եւ հաւատացած ենք, եթէ հայէնուանքի, բղաւոց-ճղաւոցի, և անւանարկութեան փոխանակ լուրջ խելքով, փաստերի հիման վրա համեմատական եղանակով ուսումնասիրւէր քահանակական խնդիրն էլ. ինչպէս ամեն մի հասարակական խնդիր, հիմա մեր գործերը ակսպիսի ողորմելի վիճակի մէջ չէին գտնւի։

Շուշի

ԼԵՒՈՆ ՍԱՐԳՍԵԱՆՑ